

ՏՆՕՐԵՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ որ եւ ե գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱՇԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ի Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔԵՄԲԵՐԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եղիայտալի համար տեղի, ողջ դ. 80
» » վեցամսեայ » 50
Օսար երկիրներ տարեկան ֆրանկ 25
» » վեցամսեայ » 14
Թղթասարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է :

Խմբագրութեան ուղղութեամբ ցա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր :

ԶԻ ՄՈՒՆԱՆՔ ՈՐԲԵՐԸ

Պոլսոյ ազգային թերթերը քիչ չափ ու-
շադրութեամբ աչքէ անցունող մը պիտի դիտէ
թէ ՈՐԲ բառը յանկարծական կերպով բնա-
ջինջ եղաւ անոնց մէջէն . հազիւ երբեմն կը
համարձակին «աղքատ աղաք» կամ «չքաւոր
դպրոցականներ» բացատրութիւնը գործածել
լուր մը տալու առթիւ : Հանգանակութեան
համար հրաւերներ , գաւառներն սպասող ու-
րերու փոխադրութեան ու տեղաւորման մա-
սին կարծիքներու փոխանակութիւն , որբանոց-
ներու հաստատման պէտքը բացատրող յօդ-
ուածներ , ամենքն ալ ընդհատուեցան , դադ-
րեցան : Մեզքը հայ խմբագիրներունը չէ՝ եթէ
ակամայ լուրթեան մը կը դատարարուին
նիւթի մը վրայ որուն այնքա՛ն սրտաշարժ տու-
ղեր նուիրեցին գեռ մինչեւ մէկ ամիս առաջ .
գրաքննութիւնը (censure), վերէն տրուած հրա-
մանի մը վրայ անշուշտ, իր արգելիչ ու ճնշող
թաթը երկնցուցած ըլլալու է :

Որբերու վրայ գրելը արգելելով՝ կուզուի
որբերու գոյութիւնը մոռցնել տալ . բարեբաղ-
դաբար , Տաճկաստանէն դուրս ալ հայ լրա-
գրութիւն մը կայ որ չի պիտի դադրի այդ
կենսական հարցովը զբաղելէ , ու կա՛յ մանա-
ւանդ եւրոպական մամուլին անկախ , անկաշ-
... կանգ ու հայասէր մասը որ իր հրատա-
րակութիւններով կրնայ մեծապէս օգտակար
ըլլալ . տասնեակ հազարներով համրուող ըն-
տանեզուրկներու նուիրուելիք պաշտպանու-
թիւնը վերաբերութիւն չունի քաղաքականու-
թեան հետ , ո՛չ Գերմանիոյ չահերուն կը դըպ-
չի ո՛չ Ռուսիոյ ծրագիրներուն : Այն ինքնաբոլի
զգացումով որով փողոցէն անցնող օտարական
մը ձեռք կը կարկառէ լացող տղու մը որուն հայ-
րը սպաննուած ըլլայ , առանց հարցունելու
թէ ի՞նչ ազգի կը պատկանի , ու բան մը կը
խորհի անոր համար , եւրոպայի մեծ մարդա-
սէրները , մեծ դիւանագէտները , մեծ ընկե-
րաբանները թերեւս կարեկցին ամբողջ ժողո-
վուրդի մը որը զաւկներուն վրայ : Դրամ չէ
որ պիտի խնդրուի իրենցմէ , այլ զուտ բարո-
յական պաշտպանութիւն մը , միջամտութիւն
մը որպէսզի հայ ազգը գոնէ կարենայ իր կրցած
և ուզած ձեւով մեծցունել , գաւառաբանել
իր որբերը :

Օրինակները չեն պակսիր . կը յիշուի որ
գեռ վերջերս վեհանաճ դիմում մը եղաւ ֆը-

րանսացի ականաւոր անձնաւորութիւններու
կողմէ իրենց նախարարապետին մօտ՝ ապա-
հովելու համար Հայաստանի թշուառ ու ան-
պաշտպան ժողովուրդին վիճակը այն վտանգ-
ներուն առջեւ որոնք կրնան պատահիլ պա-
տերազմէն վերադառնալիք զօրքերուն ներ-
կայութենէն : Նոյն տեսակ բարեբար միջա-
մտութիւն մը կրնայ ըլլալ նաեւ որբերուն ի
նպաստ :

Գալով մեզի, Տաճկաստանէն դուրս գըտ-
նուող հայերու , Եգիպտոս , Եւրոպա , Ամերիկայ ,
ամեն տեղ ուր հայ դադուութիւններուն կարող
մասը սկզբնաւորութիւն մը ըրաւ որբերու
պաշտպանութիւնն ստանձնելու , ցաւալի է
տեսնել որ այդ եռանդը քիչ մը մարիլ կը սկսի
Պատրիարքարանին ընդդիմութիւնը մէկ կող-
մէն — որ կամայ թէ ակամայ՝ գոհացում չի
տուաւ յայտնուած փափագներուն և պահան-
ջեց որ ինք որբեր զրկելու տեղ՝ Յանձնաժո-
ղովները դրամ զրկեն Պոլիս — ու միւս կողմէն՝
հանգանակութեանց թոյլ ընթացքը , կարգ մը
հարուստներուն ձեռնպահութիւնը ու անձնա-
կան նկատումները , այս ամենը քաջաբերիչ
չեն բնաւ :

Որչափ որ կը զօրէ մեր տկար ձայնը , նոր
կոչում մը կրննք այս մարդասիրական մեծ
գործին համար , ու առանց մանրամասնու-
թեանց մտնելու , կը յուսանք որ Յանձնաժո-
ղովները առաջ պիտի վարեն սկսուած հան-
գանակութիւնը , մի և նոյն ատեն շարունակե-
լով իրենց բանակցութիւնները Պատրիարքա-
րանի հետ , գործնական արդիւնքի մը յան-
գելու համար :

ՀԵԼՎԵՏԵԱՆ ՆՕԹԵՐ

ԶԵՐՄԱԹ ԵՒ Ս. ԹԵՕՏԻԼԻ ՓԱՅՓԱՅԱՆՔԸ

Լ.Ա.ՎԵՅ-ԼԵ-ՊԷՆ (Վ.) 10 Սեպտեմբեր

Զլրամիջը Զուիցերիայի ամենէն գեղեցիկ ամա-
րանոցներէն մէկն է , Վիլէթի լեռնահովտին ծայրը ,
Խալախայի սահմանագիծէն ոչ շատ հեռու : Բազմա-
թիւ ստոյգի անապատներ դուրս կուտան իրենց
ներքեւէն փոփրալից առուներ , որոնք միանալով
կը կազմեն Վիլէթ գետակը , որ կանցնի Զլրամի
եզերքէն : Վիլէթի ամենէն բարձր գիւղն է այս և
ունի 1600 մէթր բարձրութիւն , տասը տարիէ ի
վեր Զուիցերիայի մէջ ամենէն շատ կարեւորութիւն
է ստացած , լեռնային ագուգաւոր երկաթուղին
պատճառաւ (chemin de fer à crémaillère) որ կը
բարձրանայ մինչեւ հոն 35 հազարամէթր երկայնու-

թեամբ . զալ տարի կաւարտի նոր գիծն որ կեր-
կարի տակաւին ինք հողարամէթր երկարութեամբ՝
Գորնէրկադ ըստած լեռը , 3100 մէթր բարձրու-
թեան վրայ :

Գիւղը թէեւ աղտոտ է և հողիւ ունի 550 բնա-
կիչ , բայց օդը շատ առողջարար է , և զարգարուած
բազմաթիւ մեծ ու գեղեցիկ օթեւաններով , որոնք
կրնան մրցիլ Բարիդի բարձր օթեւաններուն հետ .
անոնց մէջ ամեն օր մօտ 3000 այցելու կան ամառ .
նային ամիսներու միջոցին : Ամէն վայրկեան ձեռ
աչքերը պիտի ստոխ տիւնէններու և բրնձներու
առջեւ :

Հոս ամէնքը բարձր են , — լեռները բարձրա-
դիր , ծառերը բարձրադէշ : Զրբեր բարձրագոյն ,
և մարդիկ բարձրաստիւ . ևս միայն մեծաբայե-
րէն եմ : Բարեբաղդութիւնն այն է որ հոս մեծա-
գայլ մարդիկ չկան և գիւղացի գողութեան ու
ստախոսութեան գաղափարն անգամ չունի : Ով որ
լեռնային հայրենիք մը ունեցած է ու տարագիր , հոս
կրնայ քիչ մը փոփոխք ու միթիւրութիւն գտնել :
Հոս Բարիդի երաժիշտներն ու արուեստագէտները
Ֆլեմսոնեցիներն , ամէն մարդ ձանձրացած քաղաքի
գուարճութիւններէն , բնութեան ներդաշնակութեան
վրայ հիմնալ կուգէ : Օրուան հերոսն այն է , որ
շատ կը քալէ ու լեռան մը ձիւնեղէն կատարը կը
բարձրանայ :

Լեռները բազմաթիւ են , դիրամասաշէլի ու
ծիւնապատ , ամենքն ալ եղջիւրի ձեւ ունին , աղոր
համար հօրն (եղջիւր) գերմաներէն բառը կըսուած
ունին իրենց անուան : Պրայթ Զօրն ամենէն նախընտ-
րելին է . ոչ միայն վերելքը դիւրին ըլլալուն համար
այլ այնպէս յարմար գետեզուած է միւս ամէնի բարձր
լեռներուն մէջ որ կրնայ չորս կողմի վրայ ալ շատ
հեռուները տեսնել , Խալախայի Ալպեան բոլոր հո-
վիտները , Զուիցերիայի շեռաւոր լեռները և Մօն-
Պլանը :

Օգոստոս 22ին , շատ մը եւրոպայի ընկերներով
մեկնեցայ բարձրանալ այդ հիւսարանէ լեռան կատա-
րը . Պրայթ Զօրնի ու մեր Պեթի Զօրնի(1) մէջ
շատ լիջ տարբերութիւն գտայ : Մեր առաջնորդնե-
րը , մէջքերնիս չուաններով կապած , ձիւնեղէն ա-
նապատի մը վրայէն տարին 7 1/2 Ժամուայ միջո-
ցին խալախան հողի վրայ , Սէն-Թէօֆիլի անցքին
բերանը , իջեւանի մը մէջ իրիկուտն գաղափար առնելու :
Իջեւանը Տաճկաստանի խաներուն փոքրիկ ու կոկիկ
տեսակն էր : Գիրովի , կարմրայտ ու հրապայտ աչքե-
րով խալախի մը տան տէրն էր . իր գաւակներով
հոն կանցընէ մինչեւ աշնան սկիզբները , ու վերջը
կը մեկնի դէպ ի հարաւ , Աստուծոյ ձերմակ խաւա-
խօյի խնամքին յանձնելով իր խրճիթը : Իրենց հետ
մշտական ընկեր ունին սպիտակ , խոշոր ու թաւա-
մող շուն մը , որուն թիւրք անունը տուած են , ինչ-
պէս որ առհասարակ սովորութիւն է Խալախի և
Յունաստանի մէջ :

Զիւնը պաշարեց մեզ այդտեղ երկու օր և եր-
րորդ օրը հրաշալի արեւի մը հետ բարձրացանք լե-
ռան կատարը և 4100 մէթր բարձրութեան վրայ
ամպերը խոնարհեցուցինք մեր առջեւ :

Ուրախ էր մեր դարձը . և կը մտածէինք թէ
օրուան հերոսը պիտի ըլլայինք Զլրամի մէջ : Նորէն

(1) Ծ. Խ. — Զիլթուցի Պեթի լեռան կապիւսիկէ
«Զիլթուց»-ի համակրելի հետիւնակը :

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Հասանք իջեալն, նախաճաշ ընելու և շարունակելու մեր ճամբարն: Խորհիթը լեցուած էր այս անգամ քառասունի չափ զրօսաշրջիկներով և շունը կը խաղար անոնց հետ՝ փայլուն արեւուն ներքեւ: մեր առաջնորդները սկսած էին իրենց թիրօլեան երգերը, և ինձ յիշեցնել կուտային ճիշդ մեր երկրի շնագայլերուն ոռնայը: Սառած կօշիկներս չորցնելու համար ես ալ դուրս եկայ արեւուն ներքեւ:

Եւ յանկարծ այն քառասուն պարարտ մարդերուն մէջ իմ նիւթը թեւս էր որ արիւնեցաւ...

Շունը ընտրեց ու խածաւ իմ թեւս: Տանտիկինը, որուն հետ բարեկամացած էինք արդէն, եկաւ իր անուշ ժպիտով ու քաղաքավար ձեւերով զիս մխիթարեւ:

—Թո՛ղ անհոգ լինի պարոնը, շունը փայտայած ըլլալու է զինք, վասն զի սովորութիւն չունի խածնելու:

Ջարտացած՝ կնոջ «փայտայանք» խօսքին վրայ, հոսող արեան դիմաց, հարցուցի:

—Տիկին, արդեօք Ս. Թէոտիւի փայտայանքն է այս թէ խաղաղան փայտայանք մը:

—Ո՛յ, պատասխանեց տիկինը նորէն ժպտուն, թիւրքի փայտայանքն է հայու մը համար...

Եւ զարմացած տիկնոջ սրտատուրեան վրայ, բայցեւս ուղղեցի դէպի Ջէրմաթ, ճամբան մտածելով այս գուգադիպութեան վրայ:

—Հո՞ս ալ...:

Ա.ՂԱՍԻ

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

Տխուր, աստուածոգիտի յուր մը, —որուն կը փարսնիկ միևնույն իսկ հաւաս ընծայելու, այնքա՛ն անակնկալ է ու այնքա՛ն քարքառասկան քան մը ունի իր մէջ, — կը հասնի Կ. Պոլսէն: Մահու պատիժը գործադրուել է, ու ամենէն փայլագ կերպով, յորս հայ երիտասարդներու վրայ որովհէտ դասաւարտուած էին օգոստոս 6/18ի դէպքին առթիւ: Գոյժը հրապարակ հանած է անգղիական Տէյլի Մէսէնճէր յրագիրը ոսկից առնելով հրատարակեց նաեւ Փրանսական մամուլը: Եւսկայն Լոնտոնի կարեւորագոյն քերթեր, ինչպէս Թայմը, Սթանտարտ, Տէյլի Նիւզ ո՛ր եւ չիշատակութիւն չեն պարունակել որ այս մասին ու Պոլսէն ալ ողորակի յուր մը չէ առնուած, ինչ որ ենթադրեց կուտայ — քարեքաղաքաւ — թէ ստուգութիւնը տարակոյսի ներքին է:

Այս յոյսով եւ ժամ առաջ հերքուած տեսնելու փափագով՝ կարտասպենի Տէյլի Մէսէնճէրի գրածը:

Սեպտեմբեր 10ի առաւօտուն, Պոլսոյ կեդրոնական բանտի բակին մէջ մահու պատիժը գործադրուել է այն հայերէ չորսին վրայ որոնք դատաւար տուած էին իրեն տրամաբարձակ: Յիշերու վրայ մահացուցել են զանոնք ու օրհասնին ահուկել եղեր է: Անոնց մարմիններ կը հանգչին հիմակ Հայոց գերեզմանատան մէջ ուր փոխադրուեցան սայլի մը միջոցաւ, զօրքերու հսկողութեամբ:

Կը կրկնենք, դժուար կուգայ մեզի հասնալ թէ ցիցերու միջոցաւ մահու պատիժը գործադրելու խոտորած գաղափարը գոյութիւն ունեցած ըլլայ ամենէն խիստ դաստիարակ ու ամենէն դաժան դահիճին մէջին մէջ անգամ, մանաւանդ այն միջոցին ուր Պատրիարք եւ Վարչութիւն շնորհակալութեան ու հաւատարմութեան ողորմ կը մատուցանեն պաշտօն եւ Ազգիկ ու Տէրութեան միջոց հայտարարութիւններ հաստատելու կաշխատին, ինչ որ Դրան ալ փափագն է:

Կը պատենք աւելի որոշ յուրերու:

Հայկական խնդիրը խորագրին տակ հետեւեալ կը կարգանք Բոսկորէի մէջ.

«Սուլթանը հրամայեց Յանճաժողովի մը կազմութիւնն ի Կ. Պոլսէ՝ երկու թուրք, երկու հայ լուսաւորչական, մէկ հայ կաթողիկէ և մէկ յոյն անգամէ բազկացեալ, որ պաշտօն ունի այցելել Անատոլիոյ այն նահանգները ուր կոտորածներ տեղի ունեցած են:

«Այս Յանճաժողովը պարտի հանգանակութիւն (!) կատարել այն եկեղեցիներու, վանքերու և դպրոցներու վերաշինութեան համար որոնք կործանուած էին վերջին խռովութիւններու ատեն, ինչպէս նաեւ որբանոցներու հաստատման ի նպաստ:

«Յանճաժողովն անմիջապէս ճամբայ պիտի ելլէ՝ ձմեռնամուտէն առաջ գործի սկսելու համար:

«Բերայի դեսպանական շրջանակներուն մէջ կը կարծուի թէ Սուլթանը՝ այս հնաբոլ կողմէ առաջը առնել որպէսզի բարենորոգումներու խնդիրը մէջտեղ չի դրուի»:

—Սուրատ պէյի նկատմամբ չըլած զբոյցներու ամենքն ալ անհիմն են եղեր. Միզանի նախկին խմբագիրը ո՛չ անյայտ եղած է և ո՛չ ալ եւրոպա փախած: Իր ծովագրեայ բնակարանը նստած, Անատոլիոյ Հիսար, Վասփորի հովերը կը ծծէ:

Կըսուի թէ երկրորդ պալատը տարուելով՝ քանի մը օր հոն մնացել է հարցաքննուելու համար. ասկից ծագում առած էր իր անյայտացման լուրը: Ոստիկանական շղթան որ հաստատուած էր իր տան շուրջը և ամեն այցելութիւն կարգիլէր, վերցուել է:

—«Դեսպանները արձակուողով կը մեկնին». ահա՛ կարեւորագոյն հեռագիրը որ կը հասնի Կ. Պոլսէն. մեծ տէրութեանց ներկայացուցիչները այլ եւս կուզեն երթալ հանգիստ վայելել տարուան մը յոգնութենէ ու աշխատութենէ ետք, թէեւ անոնց արգիւնքը մեծ բան մը եղած չըլլայ: Հաշտութեան նախնական պայմանները կըրուեցան շաբաթ օրը, ի Յիւրա. այս ալ բան մըն է. բայց ի՞նչ հիմերու վրայ և ո՞ր աստիճան ապահովելով Յունաստանը՝ ելմտական ու քաղաքական քայքայման մը դէմ: Աթէնքէն առնուած լուրերը բնաւին չեն արտայայտեր գոհունակութեան նշան մը: «Կըրուած դաշինքը կը փոփոխէ հին սահմանագիծը Թուրքիոյ և Յունաստանի միջեւ ու պատերազմական սուգանքի դուռը կը սահմանէ չորս միլիոն ոսկի: Թեսալիան պիտի պարպուի այն ատեն միայն երբ հեղին խորհրդարանը վաւերացնէ կարգ մը հասցիներու յատկացումը կըրելի փոխառութեան: Յոյն մամուլը կողմայ այս պայմաններուն վրայ: Ընդհանուր տպաւորութիւնն է՝ վշտալի համակերպութիւն մը»:

Այս հակիրճ հեռագիր պէտք եղածէն աւելի բացայայտ է՝ Յունաստանի կացութիւնը ցցունելու համար: Խորհրդարանը պիտի գումարի այս օրերս քննելու հաշտութեան պայմանագիրը զոր կառավարութիւնը շատ ծանրաբեռն կը յայտարարէ, մանաւանդ ելմտական քոնգրոյի մասը:

ՌՈՒՍ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Թայվգի Բեդրաստուրի թղթակիցը հետեւեալ կը հեռագրէ իր թերթին սեպտեմբեր 13 թուականով.

«Ռուս կառավարութեան այն պաշտօնական յայտարարութիւնը որ ուրբաթ օր երեւցաւ, և որ հաստատուելէ ետք Թուրքիոյ հայ յեղափոխականներու վերջին արարքները զորս լրագիրները ծանուցին, կը դատաւարտէ զանոնք, Նովոյի Վրեմիայի կողմէ կը նկատուի իրեն նշան մը մտաւորաւ վայրկեանի մը ուր թուրքահեղինական հաշտութեան պայմանները կըրուելուն պէս, Ռուսիա, յանուն միւս մեծ Տէրութեանց, խիստ ազգու միջոցներ ձեռք պիտի առնէ, ցուցունելու համար Թուրքիոյ թէ ուրիշ բան չի մնար ընել իրեն՝ բայց եթէ խնամակալ Եւրոպիոյ խրատներուն և պահանջումներուն առջեւ որոնք Թուրքիոյ բրիտանիկ համար խոստացուած բարենորոգումներուն կը վերաբերին: Եթէ Ռուսիա վերջին թուրքահեղինական խնդրոյն մէջ մեզմէ ընկալեց մը ունեցաւ, պատճառը այն է որ ինք Տաճկաստանը չէր նկատեր պատերազմին իրեն պատասխանատու և միւս կողմէ Թրքական բանակները այնքա՛ն սքանչելի կարգապահութիւն մը և բազմութիւն մը ցուցուցին որ Եւրոպիոյ զարմացման արժանացան. բայց Թուրքիա՝ հաշտութեան կըրուելէն ետք՝ Ռուսիոյ այս բարեացակամութեան վրայ յոյս դնելու չէ: Բ. Դուռը Ռուսիոյ կողմէ խիստ բացարձակ ազգարարութիւններու պէտք է սպասէ որ իրեն պիտի ըլլուն Ռուսական նոր դեսպան Պ. Չինովիկի միջոցաւ որ, պէտք է աւելցնեմ, Պոլսի չի գալլած Սթօքհօլմ պիտի այցելէ Օսման թագաւորին յորէնանին ներկայ գտնուելու:

«Հետեւաբար Ռուսիա, ըստ Նովոյի Վրեմիայի, կը փափաղի միանգամ ընդ միշտ մէջտեղէն վերցնել հայ յեղափոխականներու այն հաւատարմութիւնը որոնք օգտուել Ռուսիոյ ձեռք առած ուղղու միջոցներէն և կամ կընան վայելել անոր համակրութիւնը: Եւ ասկից շատ հարկաւոր էր, կըսէ Նովոյի Վրեմիա, որովհետեւ «արտասահման գտնուող հայերը» կը կարծեն թէ իրենց Թրքահայ յեղափոխականներուն մէջ մեծ-թուով ուստահայելու ալ կը գտնուին որոնք իրենց կառավարութեան գիտակցութեամբ կը շարժին: Միւս կողմէ, վերջիշտաւ պաշտօնական յայտարարութիւնը սա առաւելութիւնը ունի որ պիտի համոզէ թուրք կառավարութիւնը թէ Ռուսիա հայ յեղափոխականները զազանի կըրպով բաշխուելով չէ որ իր խաղաղական գիտակցութիւնները պիտի գործադրել տայ, այլ ստիպելով Սուլթանը որ ինք անձամբ կատարէ ամբողջ կայսրութեան բրիտանիկ համար խոստացուած բարենորոգումները»:

Ա.ԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Բ. Դրան կողմէ Ազգ. Պատրիարքարան ուղղուած է եպարքոսական պաշտօնագիր մը որ կը վաւերացնէ Տ. Յակոբ Աշոտ Ծ. վարդապետի պաշտօնն իրեն առաջնորդական տեղապահ Հայոց Եգիպտոսի:

Խառն ժողովն իր անցեալ չորեքշաբթիի նիստին մէջ որոշեց իր ուղղակի Տ. Աշոտ վարդապետին զրկել սոյն պաշտօնագիրն, որպէսզի Եգիպտոսի կառավարական պաշտօնատանց ու Առաջնորդարանին միջեւ յարաբերութիւնը ըստ առաջնոյն կատարուին օրինաւորապէս:

Տ. Աշոտ վարդապետ, որ Ազգ. Բարձրագոյն կը գտնուի, Խաչի կիրակին տեղւոյն եկեղեցիին մէջ պատարագելէ ետք, յաջորդ հինգշաբթիին վերջնապէս պիտի վերադառնայ Գահիրէ:

Եպարքոսական պաշտօնագրով վաւերացած են նաեւ ուրիշ հինգ առաջնորդական տեղապահներու պաշտօններ. Ճանիկի, Չարաճապցի և Սամոնի միացեալ վիճակին, Տրապիզոնի, Արաբկիրի, Շապին-Գարահիսարի և Պանտրամ-Պալքէսի: Այդ պաշտօնագրեր

պիտի յանձնուին տեղապահ վարչապետներուն որոնք Կ. Պոլիս կը գտնուին, հրաւիրուելով որ իրենց վիճակն ուղեւորին:

Վեհափառ Կաթողիկոսը ազամանդազարդ լանջախաչ նուիրել է Տ. Յովհաննէս Ա. Բա- հանայ Մկրեանին, ի վարձ իր եկեղեցական բազմամեայ ծառայութեանց և գրական աշխատութիւններուն:

Ընթերցասիրտը ընկերութեան Բ. լսարանը, ուր նախորդէն տեւի թաղութիւն մը ներկայ գըտնուեցաւ, բաւական յաջող էր, շնորհիւ երաժշտական մասին զոր երկու նուագաւոր պարոններ կազմակերպած էին:

Խօսողն էր Տիար Յ. Սէթեան, որ հակառակ իր անձնական տկարութեան՝ ախորժելի կերպով կարգաց իր ճառը որուն նիւթն էր Վիքթոր Հիւկոյի մէկ գործը՝ «Ժոփա աշխատանքներ»:

Որքան որ այդ հաստատած գրական մեծ արժէք մը ունէր, բայց ինչպէս միւս անգամ ալ դիտուեցաւ՝ ունկնդիրները չի կրցան ըմբռնել պէտք եղած կերպով:

Առաջնորդարանի Դիւանատունէն ստացած ենք՝ տղք. տրոյց հաստատման ամօթիւ քաղաքիս կարող ազգայնոց ուղղելի չըլարեարկանին պատճէնն ինչպէս նաեւ Զախարիի գերեզմանատան ծանօթ խընդրոյն կարգադրութեան վերաբերող տեղեկութիւններ զորս պիտի հրատարակենք շարաթ օրուան թուով, այսօրուան թերթը լեցուած ըլլալով երբ ստացանք դանսը:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

ԿԱԼԻՈՒՊԻ ԴԵՊՐԸ

Երկուշաբթիին ի վեր, Եգիպտոսի մէջ ընդհանուր խօսակցութեան և ուշադրութեան առարկայ դարձած է նախորդ իրիկունը, կիւրակի, պատահած դէպք մը որ կրնար ծանրակշիռ երեւոյթ մը ստանալ:

Անգլիական գրաւիչ բանակէն ջոկատ մը զօրք մարզանք կը կատարէին Կալիուպ գիւղին մօտ որ Գահիրէէն Աղեքսանդրիա տանող երկաթուղիին առաջին կայարանն է, Շուպ-րայէն անմիջապէս ետք, ու քաղաքին արուարձաններէն մէկը կը համարուի: Մարզանքին աւարտումէն ետք՝ ջոկատը Ապպասիէ կը վերադառնար երբ յանկարծ պաշարուեցաւ տեղացիներու խումբէ մը որոնք սկսան զանոնք քարկոծել: Տեղացիները սկսան խոյս տալ սակայն, երբ տեսան որ անգլիացի զօրքերը յարձակողական շարժումի մը կը պատրաստուին. այսուհանդերձ, զինուորական միջոցներ ձեռք առնուեցան ձերբակալելու համար այս յանդուգն փորձին հեղինակները: Գիւղը պաշարուեցաւ և իրողութիւնը իսկոյն հաշորդուեցաւ ի Գահիրէ:

Ոստիկանութեան հրամանատար Հարվէյ փաշա յատուկ կառախումբով Կալիուպ փութաց, բազմաթիւ ոստիկաններով, հարկ եղած քննութեան ձեռնարկելու համար: Առաւօտեան դէմ, անգլիական զօրաց գունդ մըն ալ գնաց՝ գիւղին պաշարումը զօրացնելու, որպէս զի ոչ ոք կարենայ դուրս ելլել մինչեւ որ քննութիւնն աւարտի և յանցաւորները ձեռք անցնին:

Այս գործողութիւն կատարուեցաւ մինչեւ երէկ ու գիւղին պաշարումը վերցաւ: Իբրեւ յանցաւոր ձերբակալուած ու հսկողութեամբ քաղաք բերուած են տասներկու արաբ-

ներ, ամենքն ալ երիտասարդ, 20էն 23 տարեկան, որոնք պիտի դատուին մասնաւոր ատենի մը առջեւ:

Բարձր. Խտիվը կիրակի իրիկուն անպաշտօն կերպիւ Գահիրէ եկաւ ու գիշերը Գուպէի պալատն անցուց: Երկուշաբթի Աղեքսանդրիա վերադարձաւ:

— Լորու Գրոմըր շարաթ օրը Լոնտոնէն ճամբայ ելիւ է Եգիպտոս վերադառնալու համար: Հաւանաբար այս իրիկուն կը հասնի:

— Մեհաքիթէ Էմիլիանօ զրոյց մը կը յիշէ, թէ այս միջոցիւ Աղեքսանդրիա գըտնուող Ասորիքա մարտանաւին հրամանատարը հրահանգ ունի ուսումնասիրել այդ նաւահանգիստը ինչպէս նաեւ Ապուքիրի ծովեզրը, անգլիական նաւային կայանի մը հաստատման նպատակով:

— Զակաղիկէն կը գրեն Էյ-Մուսայեւսին.

«Տեղւոյս պատժական ատենը անպարտարձակեց այն բոլոր անձերը որոնք ձերբակալուած էին՝ օգոստոս 31ի գիշերը աղմուկ յարուցած և խռովարարական ցոյցեր ըրած ըլլալուն համար»: Աբանշէլի՝ վճիռ:

— Աղեքսանդրիոյ կառավարիչ Իսմայիլ փաշա Սապրի շարաթ օրը յարձակման մը առարկայ եղաւ: Միջօրէին իր բնակարանը կը վերադառնար կառքով, դուր-կառավարիչ Մուհամմէտ պէյ Վասիլի ընկերակցութեամբ, երբ Մուհարրէմ պէյի կամուրջին ու դրան մէջտեղ կեցած մարդ մը յանկարծ կառքին մօտեցաւ և առանց տեսնուելու Սապրի փաշայէն, որ կռնակը այն կողմ դարձուցած՝ կը խօսակցէր ընկերոջը հետ, ձեռքի գաւազանով սաստիկ հարուած մը իջուց անոր աջ զիստին: Դուր-կառավարիչը ոստիկաններ կանչեց որոնք մարդը բռնեցին: Իսա Սօլիման առնուն պէրպէտի մըն է, երբեմն խոհարար Պ. Սըանեիի քով: Իր յարձակման շարժառիթը վրէժխնդրութիւն է եղեր, կըսուի Էմին փաշա Ֆիքրի Աղեքսանդրիոյ կառավարիչ եղած ատենը՝ անոր մէկ խիստ վարմունքին պատճառաւ: Որս պահած էր զոր յագեցունել ու զեր է ոչ թէ Էմին փաշայի այլ յաջորդին վրայ: Ուրիշ զրոյցի մը նայելով, պարզապէս խենդ է եղեր:

— Գահիրէի մէջ մեծ զօրանոց մը պիտի կառուցուի, կըսուի, անգլիական զօրքերուն ընկալութեան յատուկ: Շինութեան ծախքը 40,000 եգպ. ոսկի կը հաշուի:

— Եգիպտոսի հանրային պարտուց վարչութեան երեք պատուիրակներուն պաշտօն պիտի յանձնուի Աթէնք երթալ և ելմտական քննդրող կազմակերպել:

— Նախորդ շաբթուն Կ. Պոլսէն հեռազրաւ հրաման ղրկուած էր Պէրութի կուսակալին որպէսզի թէ՛ Սուրիա և թէ՛ Լիբանան գտնուող բոլոր եգիպտացիները 24 ժամուան մէջ դուրս հանուին: Այս հրամանին համաձայն, քանի մը օր առաջ Խտիվական շոգենաւով Աղեքսանդրիա վերադարձան վախճանեալ Բուէնս Հասան փաշայի փեսան՝ Հասան պէյ Մոհմէն, ելմտական նախարար Մազլում փաշայի եղբայրը՝ զատաւոր Այի պէյ Մազլում և Վազֆի նախկին տեսուչ Իսմայիլ պէյ էլ Պորայի, որոնք օգաւիտութեան համար այն կողմերը գացած էին: Ուրիշ խումբ մը եգիպտացիներ ալ կը սպասուին այսօր վաղը:

Այս արտաքրման անակնկալ հրամանին շարժառիթը սապէս կը պատմուի տեղական թերթերուն կողմէ. տեղեկութիւն հաշորդուեր է ի Կ. Պոլիս իբր թէ խումբ մը եգիպտացիներ, նոյն իսկ պաշտօնական անձինք, մտադրութիւն ունին խռովութիւն արծարծել Սուրիոյ մէջ և այդ նպատակով հոն գացած ըլլան:

— Ապուքիրի ճամբուն վրայ սպաննուած անգլիացի Պ. Վէլչի ու իր ձիապանին սպաննիչները գտնուած չեն տակաւին. քննութիւնը առաջ կը տարուի, մէկ կողմէն ձերբակալուածները թողուելով ու միւս կողմէ կասկածելիներ ձերբակալելով: Այս պահուս քսաներկու հոգի բռնատարկուած կան:

— Վերջին պատերազմին ատեն հեղինական մարտանաւ մը կողմէ գրաւուած Եօր-կիոս շոգենաւին խնդիրը սկզբունքով կարգադրուած է Բույեէ պէյի միջոցաւ որ յատկապէս Աթէնք ղրկուած էր Բարձր. Խտիվին կողմէ: Շոգենաւը պիտի յանձնուի եգիպտական կառավարութեան՝ իր տէրերուն դարձուելու համար:

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԼՈՆՏՈՆ, 21 Սեպտ. — «Տէյլի Նիւսզ» կիտանայ Հոռոյ թէ Ռուսիա, Ֆրանսա, Գերմանիա և Աւստրիա համաձայնած են Արեւելքի մասին՝ բաժանման մը ի նախատեսութիւն: Զանքեր կըլլան Իտալիան ալ իրենց միացնելու:

ՀԱՆՆԱ, 21 Սեպտ. — Կրիտի կառավարիչը Դրան կողմէ բողոքեց՝ միջազգային ոստիկանութեան մը հաստատման դէմ:

Կ. ՊՈԼԻՍ, 21 Սեպտ. — Դուր փաւրացուց հաշտութեան նախնական պայմանագիրը:

ԱԹԵՆՔ, 21 Սեպտ. — Լրագիրները կը բողոքեն հաշտութեան պայմաններուն դէմ:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ «ՓԱՐՈՍ»Ի

Հ. Հ. Աղեքսանդրիա. — Բոլորովին համամիտ ենք ձեզի:

ՏԻԿԻՆ Ֆ . . . Գահիրէ. — Խրաւուր ունիք շուարելու, բայց պէտք չէ մոռնալ թէ bon tone, այսինքն պատշաճութիւնը կը պահանջէ որ երբ կին մը տան մը մէջ երեկոյթի մը հրաւիրուի, պէտք է որ առանց գլխարկի երթայ, մանաւանդ որ երաժշտութեան ալ ունկնդիր պիտի ըլլայ:

Հետեւաբար Գլխաւոր ընթերցասիրտը ընկերութեան տունը նկատուելով լու կընէք առանց գլխարկի երթալով:

Ե. Ս. Աղեքսանդրիա. — Անձանթներու յօդուածներ հրատարակել մեր սովորութիւններու մէջ չէ:

Գ. Կ. Բարիզ. — Մեր ջերմագին շնորհաւորութիւնները:

ԲԱՂԴԱՍԱՂ ԵՒ ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ

Թղթախաղի և ռուլէթի կործանիչ դերը ոչ ոքի ուշադրութենէ կը ժրպիտ: Մօնթէ Գաւրօն համաճարակ որեւէ պիտի մը չափ զոհեր տուած է: Այս մասին բարիգետն թերթ մը հետեւեալը կը գրէ.

«Յոյն երիտասարդ մը անցեալ օր անձնասպանութեան փորձ մը ըրաւ Մարտիլի մէջ, ինքզինքը թրամիլին անիւներու տակ նետելով. բարեբաղդաբար կառապանը ժամանակին նշմարեց յուսահատ երիտասարդին այդ արարքը և անմիջապէս կառքը կեցուց:

«Մեր բարեկամներէն մին որ այդ արկածին ներկայ դտնուած է, յոյն երիտասարդին մօտենալով այս պարագային մէջ պէտք եղած փափկանկատու-

Թեանք մը հարցախորհել ուզած է իմանալու հա-
մար այդ տխուր որոշման պատճառը :

«Սեղծ երկրորդը չէ քաջութիւնը յայտարարե-
լէ որ Մանթէ-Քատըյի խաղարանին մէջ երեւոյն
հազար ֆրանքի կորուստ մը ընելէ վերջ որոշած
էր կեանքին վերջ տալու :

«Ահա խաղի վտէժը եւս, որոնց թիւը երկուսով
կաւելնայ: Միեւնոյն պարագայներուն մէջ, կը յա-
ւելու այդ թերթը, Նիսի մեծ օթիկներուն մէջ ընա-
կող մըն ալ խաղի մէջ խաղար դուրսդներ կորսնցու-
ցած ըլլալուն: ատրճանակի հարուածով մը անձնաւ-
պան եղած է :

«Հարկերնորով կը հաշուին այդ դժբաղդներուն
թիւը որոնք իրենց բասկը և շատ անգամ ուրիշներ
ուղէթի սեղանին վրայ պարարած են :

«Միւս կողմէ ամեն օր գիտնականներուն մէկ նոր
գիտնին վրայ կը ձուռն թերթերը. Տօքթօր Ռու-
ֆասթէտի այդ արժանատի յաջողքը, իր գտած
սէրմով հազարաւոր տղոց կեանքը վերած է :

«Եւ ըսէ՛ք թէ կեղծմաշկին չափ աղետաբեր է
խաղամոլութիւնը. ասոր դէմ, ահա՛, պէտք է որ
միջոցներ ձեռք առնուին :

«Խաղամոլութիւնը բոլորայի և կամ ժանտախտի
չափ գոհնը կը ափռէ իր շուրջը:

«Եթէ Գրանտայի մէջ օրէնք մը չկայ, պէտք է
որ նոր օրէնք մը դրուի արգիլելու համար թղթա-
խաղը, ուղէթը և ամեն ուրիշ տեսակ բաղդի խա-
ղեր :

«Յառաջդիմութեան, ազգային պատուոյն, մարդ-
կութեան սիրոյն համար, կը պահանջենք որ —կը վեր-
ջացնէ զրոյցը — պետութիւնը զրադի այս խնդրով
վերջ մը դնելու համար այդ անտօնի շահագործու-
թեան որ Մանթէ-Քատըյի խաղարանին գոյութեան
մի միակ պատճառն է :»

Ինչ որ Գրանտայի համար կը պահանջուի, նոյնը
կրնայ ուզուիլ նաեւ Եգիպտոսի համար:

Գահիրէի մէջ մանուսկը բազմաթիւները շատ
մը դատարկապարտներու տարուստի միջոց մը եղած
են ի վնաս պատուաւոր ընտանիքներու գաւազանը ո-
րոնք կեանքի անխորձութենէ մղուած՝ անոնց ձան-
կերուն մէջ կ'ընան անգիտակից այն անգունդին
որուն մէջ ուշ կամ կանուխ պիտի գլորին:

Ա Ձ Դ

Տիկին Սոֆիկ Ազգապետեան, մանկաբարձ, վկայեալ
կայսերական վարժարանէն, այժմ բնակութիւնը Գա-
հիրէ հաստատած ըլլալով, պատիւ ունի ծանուցա-
նել հայ հաւատարմութեան որ պատրաստ է իր խնամք-
ները տալ իրեն պէ՛տք ունեցողներուն:

Իր երկարամանակեայ փորձառութիւնը եւ խրդ-
նամիս աշխատութիւնը զինքն բաղա՛խ առաջնա-
կարգ մանկաբարձերու կարգը կանցնեն:

Դիմել Շուպրա, Չամաշի փողոց թիւ 12: Եւ-
կուսաբքի եւ հիմնադրութեան օրեր առաւօտուն կը գրե-
նուի Սարաֆեան դեղատանը ի Պէն-էլ-Սուրէն:

Տ Պ Ա Ր Ա Ն

“ՓԱՐՈՍ” ԼՐԱԳՐԻ

Կ Ը Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Ի Ն

ԱՄԵՆ ԼԵՁՈՒԻ ԵՐԶԱՐԵՐԱԿԱՆ

ՄԱՆԱԶԴ, ՀՐԱԻԻՐԱԳԻՐ, ԱՅՅԱՔԱՐՏ

ՑԱՆԿԵՐ, ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ, ՆԱՄԱԿԱԳՐՈՒԻ

Տ Ո Մ Ս Ե Ր

Եգիպտոսի որ և է քաղաքէ կամ գիւղէ եկած
յանձնարարութիւնները ամենայն խնամք և փութով
կը կատարուին:

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Այցաբարձերու եւ տնտեսուի

Տպարանը բաց է ամեն օր բացի կիրակի եւ
թուի օրերէ, առաւօտեան ժամ 7էն երեկոյեան ժամ 7:

Le Gérant: HENRY SAKAKINI

Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի

ԴՐԱՄԱՏՈՒՆ

ԱԼԵՔՍԱՆՏՐ Ժ. ԲԵՍՍԱՉՈՂԼՈՒ

Գ Ա Ն Ի Ր Է

Գնում և վաճառում աղծ եթուղթերու.—
Կանխաձեռն արժեթուղթերու վրայ.— Կատան-
ձնէ յաճախորդներու հաշուին համար գան-
ձումներ ընել եգիպտոսի և արտասահմանի
գլխաւոր քաղաքներու մէջ.— Պայմանաժամա-
ւոր վաճառում ամեն տեսակ պարգեւաւոր
արժեթուղթերու, օրինաւոր պայմաններով:

Աւելի մանրամասն տեղեկութեանց համար գի-
մել Պուլքս փողոց Եգիպտոսի հասցրատան դէմ
Բէլամազդու գրաստանը:

ՀՐԱՆՏ ԱՋԱՏԵԱՆ

ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՅԱՐԱՐ

Էօզպէքիէ, հայկական պանդոկին քովըն-
տի կամարակապ փողոցը բացած խանութին
մէջ ամենէն զժուարհաճները գոհացնելու
եղանակաւ կ'արդուէ շապիկներ և այլն սո-
վորական զինքերով:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		խառն		օմնիպ.		էքսպրէս		օմնիպ.		էքսպրէս	
		1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2 կգ.	առտ.
Գահիրէ	մեկ.	4 45	—	7 —	8 15	9 30	3 30	4 45	7 15	11 —	առտ.
Պէնհա	»	8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35	առտ.
Թանիս	ժամ.	11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44	առտ.
	մեկ.	11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54	առտ.
Տամանհուր	»	3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51	առտ.
Աղէ բսանդրիս	ժամ.	6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—	5 50	առտ.

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅԷ ԳԱՀԻՐԷՒ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		խառն		օմնիպ.		էքսպրէս		օմնիպ.		էքսպրէս	
		1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2 կգ.	առտ.
Աղէ բսանդրիս	մեկ.	—	7 —	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15	11 —	առտ.
Տամանհուր	»	—	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6	1 9	առտ.
Թանիս	ժամ.	—	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56	առտ.
	մեկ.	6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6	առտ.
Պէնհա	մեկ.	7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25	առտ.
Գահիրէ	ժամ.	8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50	առտ.

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷԶ

ՊԷՆՀԱՅԻ ԶԱՄԲԱՅ

ՍԻԻԷԶ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ.	11 40	7 —	Սիւէզ (բարափ)	մեկ.	9 50	—
Պէնհա)	ժամ.	12 28	7 48	» կայարան	»	—	3 30
	մեկ.	12 33	7 53		»	1 20	
Զակաղիկ)	ժամ.	1 34	8 54	Զակաղիկ)	ժամ.	3 7	8 53
	մեկ.	1 44	9 4		մեկ.	3 17	9 3
Իսմաիլիա	մեկ.	3 40	առտ. 1 —	Պէնհա)	ժամ.	4 13	9 47
Սիւէզ կայարան	ժամ.	—	5 —		մեկ.	4 17	9 4
Տօք (բարափ)	ժամ.	6 55	—	Գահիրէ	ժամ.	5 5	10 35